ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բուլղարիայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը.**
   Գեմաֆին Գասպարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բուլղարիայի Հանրապետություն, 2019 թվականի ապրիլի 8-12-ը

4. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.*

Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և երեխաների խնամքի և պաշտպանության շուրջօրյա խնամքի հաստատությունների վերակազմակերպման գործընթացում Բուլղարիայի դրական փորձի ուսումնասիրություն, վերակազմակերպման գործընթացում Բուլղարիայի քաղաքականության իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերի և քաղած դասերի ուսումնասիրություն, երեխաների և նրանց ընտանիքներին այլընտրանքային ծառայությունների ստեղծման և դրանց ներդրման և կայացման փորձի ուսումնասիրություն:

6. **Քննարկված թեմաները.**
   1) Երեխաների պաշտպանության համակարգ՝ շահագրգիռ մարմիններ, դերեր, պատասխանատվություններ, երեխաների պաշտպանությանն ուղղված քայլեր, միջգերատեսչական համագործակցություն
   2) Փակ հաստատություններ երեխաների մուտքն արգելելուն ուղղված օրենսդրություն
   3) Երեխաներին և ընտանիքներին մատուցվող ծառայությունների փաթեթը, ծառայությունների մատուցման ընթացակարգերը
   4) Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող սոցիալական աջակցությունը
   5) Նոր տիպի ծառայությունների ապակենտրոնացումն ու պատվիրակման տարբերակները

6) Սոցիալական աշխատողների դերը ապաինստիտուցիոնալացման գործընթացում
7) Ապաինստիտուցիոնալացման արդյունքները, քաղած դասերը
8) Քարոզարշավի դերը ապաինստիտուցիոնալացման գործընթացում
9) Տեղական ինքնակառավարման մարմինների դերը և մասնակցությունը ծառայությունների մատուցման գործընթացում
10) Ընտանիքի և երեխայի խնդիրներին առնչվող դեպքերի դատական գործընթացի առանձնահատկությունները, մեդիացիա և այլն
11) Գործընթացի մոնիթորինգ և գնահատում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Առաջին օրը հանդիպել ենք ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչների հետ, ներկայացվել է Բուլղարիայի Երեխաների պաշտպանության համակարգը և ապաինստիտուցիոնալացման գործընթացը: Նույն օրը հանդիպել ենք նաև Բուլղարիայի աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարարի տեղակալ տիկին Ռուսինովային, ինչպես նաև Բուլղարիայի երեխաների պաշտպանության գործակալության և սոցիալական աջակցության գործակալության ղեկավարների հետ, նրանք ներկայացրեցին իրենց անցած ճանապարհը, խնդիրներն ու հաջողությունները, հետագա քայլերի մասին ինֆորմացիա տրամադրեցին: Ապրիլի 9-ին մենք այցելեցինք Սոֆիայի քաղաքապետարան, ծանոթացանք սոցիալական պաշտպանության ոլորտում քաղաքապետարանի գործունեությանը, քննարկեցինք հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության իրենց մոդելը, նույն օրը այցելեցինք երեք տարածքային սոցիալական ծառայություններ մատուցող կենտրոններ: Ապրիլի 10-ին մենք հանդիպեցինք Մոնտանա քաղաքի փոխքաղաքապետի հետ, զրուցեցինք ապաինստիտուցիոնալացման իրենց անցած ճանապարհը, իրենց փոխգործակցությունը համապետական կառույցների հետ, այցելեցինք Մոնտանա նահանգի Բորոշիվեց քաղաքի սոցիալական ծառայության կենտրոն, զրուցեցինք Բորոշիվեցի քաղաքապետի հետ, ի մասնավորի սոցիալական աջակցության միջոցով աղքատության հաղթահարման պրակտիկաների մասին, այնուհետ այցելեցինք ևս չորս տարբեր սոցիալական ծառայություններ մատուցող կենտրոններ, ծանոթացանք նրանց կառավարման մոդելներին և մատուցվող ծառայությունների բնույթին: Ապրիլի 11-ին այցելեցինք Կյուստանդիլ քաղաքի փոքր

տուն և սոցիալական աջակցության կենտրոն, որոնք կառավարվում էին Սիդար հիմնադրամի կողմից, ծանոթացանք պետություն հիմնադրամ գործակցության մոդելին, ինչպես նաև ծառայությունների բնույթին, այնուհետ այցելեցինք Սոֆիայի շրջանային դատարան, ծանոթացանք երեխաների հետ կապված դատական պրակտիկաներին և մեթոդների: Ապրիլի 12-ին հանդիպեցի Բուլղարիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Սրագյանի հետ, զրուցեցինք գործուղման և մեր ծրագրերի շուրջ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության համար, մեթոդական նյութերի տրամադրման, այլընտրանքային ծառայությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման և այլ հարցերում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ապաինստիտուցիոնալացման գործընթացը Հայաստանում պետք է ընթանա հնարավորինս արագ և արդյունավետ: Դրա նպատակը մանկատներում ապրող երեխաների՝ ընտանիքում կամ ընտանիքին մոտ պայմաններում ապրելու իրավունքի ապահովումն է:

Քննարկումների և այցելությունների արդյունքում ստորև ներկայացվում է Հայաստանում ապաինստիտուցիոնալացման ճանապարհային քարտեզը:

Նպատակ	**Քայլեր**
Ապաինստիտուցիոնալացման գործընթացի իրականացման համար իրավական հիմքերի ապահովում	Կառավարության որոշման նախագիծ, որով՝ 1. կսահմանվի երեխաների մուտքը հատուկ հաստատություններ արգելող դրույթ և այն ծառայությունների փաթեթը, որը կտրամադրվի այդ երեխաներին և նրանց ընտանիքներին

	2. խնամատար ընտանիքների ինստիտուտի զարգացում (1 ընտանիքում առավելագույնը՝ 3 երեխա 1 ընտանիքում) 3. ժամանակավոր խնամատար ընտանիքի մոդելի ներդնում (արձակուրդային, ճգնաժամային, այլ դեպքերի համար) 4. խնամատար ընտանիքների վճարման հարցում ծանր հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքների համար դիտարկել հավելավճարների խնդիրը)
Ապաինստիտուցիոնալացման գործընթացի հանդեպ հասարակական կարծիքի ձևավորում՝ «ոչ թե բեռնաթափում՝ այլ վերադարձ ընտանիք, ծառայությունների փաթեթ՝ ըստ գնահատված կարիքի»	Քարոզարշավ՝ *«Մանկությունս՝ տանը»*. 1. Ֆիլմերի, մուլտֆիլմերի, գովազդային հոլովակների նկարահանում՝ մանկատանը գտնվելու բացասական երևույթի, հետևանքների և ընտանիքում ապրելու առավելությունների մասին
	2. Իրական դեպքի (բացասական) մասին ՁԼՄ-ներով տեղեկատվության տարածում
	3.Նախարարության կայքէջում գործընթացի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվության տեղադրում
	4.Սեմինարներ, կլոր սեղաններ՝ ոլորտի մասնագետների (նախարարության, մարզպետարանների, համայնքների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների) մասնակցությամբ
Կադրերով ապահովվում (երեխաների հետ աշխատող մասնագետները բարեփոխումները առաջ տանող շարժիչ ուժն են)	ՀՍԾՏՄ-ներում երեխաների և նրանց ընտանիքների հետ աշխատող (մասնագիտացված) դեպք վարողների հաստիքի ստեղծում
	Խնամատար ընտանիքների համակարգի ուժեղացում
	Կադրերի ընտրություն (փակ

	հաստատություններում աշխատող որակյալ կադրերից, նոր կադրեր (կարելի է ձևավորել մասնագետների ռեեստր օնլայն հաշվառելու համար, որից հետո հարցազրույցի, թեսթավորման կամ այլ ձևով կատարել ընտրություն)
	Կադրերի պարբերաբար վերապատրաստումներ
Մատուցվող ծառայությունների հզորացում, հասցեականության բարձրացում, որակի բարելավում	Նոր ծառայությունների մշակում և ներդնում (անձնական օգնական, սոցիալական օգնական, նոր ցերակային կենտրոններ, այլ),
Մարզպետարանների, համայնքապետարանների ակտիվ ներգրավվում գործընթացին	Քաղաքապետարանները և գյուղապետարանները՝ 1. գնահատում են իրենց համայնքում ծառայությունների կարիքը 2. Համակարգում են համայնքում իրականացվող ծրագրերը,
Միջգերատեսչական համագործակցության ուժեղացում	Գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակման հստակ մեխանիզմների, ժամկետների և պատասխանատվությունների սահմանում (օրինակ՝ ծննդատնից դեպք վարողին (ԴՎ) տեղեկատվություն երեխայից հրաժարվելու մասին, ԴՎ կողմից տունայց՝ պատճառները ուսումնասիրելու, աջակցող ցանց կազմելու և այլ նպատակով)
	Տեղեկատվության փոխնակման միջգերատեսչական էլեկտրոնային համակարգի ձևավորում
Ապաինստիտուցիոնալացման գործընթացի արդյունավետության գնահատում, խնդիրների վերհանում, նոր կարգավորումներ	Մոնիթորինգի և գնահատման համակարգի ներդնում՝ 1.Մոնիթորինգային անձնագրերի, ցուցանիշների մշակում, տեղեկատվության հավաքագրում
	2. դաշտային աշխատանքներ

	3. հավաքագրված տվյալների վերլուծություն, խնդիրների վերհանում, առաջարկությունների ներկայացում խնդիրները լուծելու համար

10. Ստորագրությունը, ամսաթիվը: 16.04.2019